ԿԱՐԾԻՔ

ԱՐՓԻՆԵ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ «ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

«Գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է:

Աշխատությունում կարևորվում է վերանայել, ձևափոխել, վերակազմավորել տնտեսության տարբեր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները, բարեփոխումներ իրականացնել, մասնավորապես հարկման դաշտում՝ ՓՄՁ-ների համար, քանի որ դրանց զարգացումն ինքնին ապահովում է սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների լուծում, ինչպիսիք են՝ **քաղաքացիների զբաղվածությունը, ինքնազբաղվածությունը:**

Հայտնի է, որ գործարար միջավայրի գրավչությունը մեծապես պայմանավորված է ոչ միայն հարկային վարչարարությամբ, այլև մակրոտնտեսական ցուցանիշներով, ինչպիսիք են՝ արտահանման և ներմուծման ծավալների դինամիկան, տրանսֆերտներով, վերաֆինանսավորման տոկոսադրույքով, ֆինանսական ռեսուրսների հասանելիությամբ, դատական համակարգով, ներդրողների շահերի պաշտպանվածությամբ, որոնք անմիջական ազդեցություն ունեն ներդրողի կողմից որոշումների կայացման գործում: Թվարկվածները հանդիսանում են տնտեսական և սոցիալական կայունության կարևոր երաշխիք, հնարավորություն ընձեռնում մեղմելու տնտեսական և սոցիալական դժվարությունները՝ ստեղծելով հուսալի պայմաններ տնտեսական աճի համար:

Ատենախոսի կողմից վերլուծվել և բացահայտվել են՝ ՀՀ տնտեսական գործընթացների տարբեր հարթություններում դեռևս գոյություն ունեցող բազմաթիվ թերություններ, համակարգային բնույթի բացթողումներ՝ կապված նաև օրենսդրության անկատարության հետ, որի անընդհատ փոփոխությունների հետևանքով ներդրողի մոտ ավելացնում է անորոշությունը և հանգեցնում ակտիվության նվազեցման:

Աշխատանքում իրականացվել է բազմագործոնային գիտական վերլուծություն, որի արդյունքում ոչ միայն հիմնավորվել են գործարար միջավայրի

կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, այլ նաև մշակվել և առաջարկվել են վերջիններիս լուծման ուղղությամբ հասցեական միջոցառումների համակարգ, որը ուղղված է գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Բացահայտված հիմնախնդիրներով և դրանց լուծման համար մշակված ուղիներով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ոչ միայն **արդիականությունը, հրատապությունը**, այլ նաև կիրառական **նշանակությունը**: Ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է թեմային, բխում է հետազոտության նպատակից: Հետազոտության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև կառուցվածքը և առաջադրված խնդիրները տրամաբանորեն բխում են մեկը մյուսից:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, էմպիրիկ, վերլուծության տնտեսաչափական մեթոդներ եւ գործիքներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից եւ հավելվածներից (ընդհանուր՝ 145 էջ):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ներկայացվել է գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, տեսական և տեղեկատվական հիմքերը, փորձարկումներն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «Գործարար միջավայրի դերը տնտեսության զարգացման գործում» գլխում ներկայացված է գործարար միջավայր հասկացության բնորոշումները, գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնային միջազգային փորցի վերլուծությունը, ինչպես նաև վերջինիս տեղայնացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:

Ատենախոսության երկրորդ՝ «Գործարար միջավայրի արդյունավետ կառավարման մեխանիզմների գնահատման մոտեցումները ՀՀ սոցիալ-

տնտեսական զարգացման համատեքստում» գլխում ներկայացված են գործարար միջավայրի վրա ազդող կառավարման մեխանիզմների ուսումնասիրությունների արդյունքները, որոնք գնահատվել և դասակարգվել են:

Ատենախոսության երրորդ՝ «Գործարար միջավայրի բարելավման և տնտեսական առաջնահերթությունների զարգացման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ուսումնասիրվել և ներկայացվել են ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող՝ ատենախոսի կողմից ընտրված մակրոտնտեսական ցուցանիշները, ինչպես նաև հետազոտության արդյունքում բացահայտվել են համախառն ներքին արդյունքի վրա ազդեցություն ունեցող գործոնները: Վերջիններիս ազդեցությունը գնահատելու և ներկայացնելու համար մշակվել է ատենախոսի կողմից ռեգրեսիոն հավասարում:

Եզրակացություններում ամփոփվել և հակիրճ ձևակերպվել են հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առաջարկները, որոնց իրականացումը թույլ կտա լուծել կառավարման արդյունավետությանը խոչնդոտող բացահայտված հիմնախնդիրները:

Հետազոտության արդյունքների **հավաստիությունը** պայմանավորված է նրանով, որ ատենախոսությունում մշակված մոտեցումները հիմնված են դիտարկվող հիմնահարցն ուսումնասիրող հեղինակավոր մասնագետների աշխատությունների վրա, միջազգային փորձի վրա հիմնված լուծումների, որոնք հաշվի են առել տեղական առանձնահատկությունները, իսկ որպես տեղեկատվություն օգտագործվել են պաշտոնական և վիճակագրական նյութեր ու տվյալներ:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ հետազոտությունից բխող եզրակացությունները և հետևությունները կարող են օգտագործվել վերոգրյալ հիմնախնդիրներով զբաղվող շահագրգիռ մարմինների կողմից, ինչպիսիք են՝ գործարար համայնքի, Ֆինանսների նախարարության, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, հարկային մարմինների և օրենսդրական կարգավորումներով զբաղվող հետազոտողների, կառավարման ոլորտի մասնագետների և հետազոտողների համար:

Աշխատանքի գիտական նորույթը ունի առանձնահատկություններ՝ նախ կայանում է նրանում, որ ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգման և վերլուծության արդյունքում բացահայտվել են գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող գործոններն ու տնտեսության իրական հատվածում առկա ռիսկերը: Առաջարկվել են ենթակառուցվածքային բարեփոխումներ՝ դրանց նվազեցմանն ուղղված Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: Բացի այդ, առաջարկվել են առավել բարձր արժեք

ունեցող ոլորտներում (գյուղատնեսություն, հագուստի արտադրություն) գործարար ակտիվության խթանումը ապահովող համալիր միջոցառումներ, որոնց իրականացման համար մշակվել են ներմուծման փոխարինման քաղաքականության կիրառման մեխանիզմներ: Այսինքն՝ ատենախոսը հետազոտության հիմնական նպատակի լուծման համար համապատասխան խնդիրները բացահայտելով, **մշակել, հիմնավորել և առաջարկել է սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն արդյունավետ կառավարմանը նպաստող համապատասխան գործիքակազմ:**

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են բացթողումներ և թերություններ, մասնավորապես՝

1. Գործարար միջավայրի գործոնային վերլուծության համատեքստում իրականացվել է բազմագործոնային վերլուծություն, սակայն հեղինակը անտեսել է հարկային համակարգի ազդեցության գնահատումը, որը գործարար միջավայրի զարգացման գործում ունի իր ուրույն տեղը և նշանակությունը:
2. Ատենախոսության երրորդ «Գործարար միջավայրի բարելավման և տնտեսական առաջնահերթությունների զարգացման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները: Կարծում եմ, որ ատենախոսը պետք է հիմնավորեր դրանց ընտրությունը: Ավելի նպատակահարմար կլիներ, եթե ատենախոսը ներկայացներ գործարար միջավայրի զարգացման տնտեսության տարբեր ոլորտների համատեքստում, ինչպես նաև առանձնացներ դրա զարգացման մակարդակներն ըստ տարածքային կառավարման համատեքստի՝ մայրաքաղաքի, մարզերի կամ մարզկենտրոնների համար:
3. Ընտրված թեմայի անվանումը և հետազոտության արդյունքները առաջին տպավորությամբ, կարծես թե այնքան էլ չեն համապատասխանում են մեկը մյուսին, սակայն երբ գնահատում ենք բացահայտված խնդիրները և առաջարկված լուծումներն ընտրված ոլորտների, գալիս ենք այն եզրահանգմանը, որ դրանք կարող են օգտագործվել նաև գործարար միջավայրի կառավարման տնտեսության այլ ոլորտներում:
4. Կարծում եմ, որ աշխատանքը կշահեր եթե հաշվի առնվեր տնտեսական հեղափոխության պարադիգման, կամ եթե ատենախոսը ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգման արդյունքում բացահայտելով գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող

գործոններն ու տնտեսության իրական հատվածում առկա ռիսկերը՝ առաջարկեր միջոցառումներ դրանց նվազեցմանն ուղղված արտակարգ իրավիջարկների պայմաններում, մասնավորապես՝ սահմանների փակման, համավարաքների ժամանակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեման արդիական է: Թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունն աշխատություն է, որը կարող է գնահատվել իբրեւ գիտության տվյալ բնագավառում կարեւոր նշանակություն ունեցող խնդրի լուծում, ինչպես նաև, նոր խնդիրներիի առաջադրում: Տրվել են լուծումներ ապահովող գիտականորեն հիմնավորված տնտեսական մշակումներ:

Ատենախոսության հիմնական արդյունքները եւ դրույթները հրատարակվել են՝ միջազգային նշանակություն ունեցող գրախոսվող գիտական 4 հրատարակություններում եւ ՀՀ ԲՈԿ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական 4 հրատարակություններում:

Ուսումնասիրելով ատենախոսությունը եւ այդ թեմայով հրատարակված աշխատանքները, կարելի է նշել, որ հեղինակի կողմից կատարվել է ինքնուրույն հետազոտություն, ինչպես նաև հաստատել հետազոտության արդյունքների հավաստիությունը, նորությունը, եզրահանգումների ճշտությունը, կիրառական նշանակությունը, ատենախոսությանը համապատասխանող մասնագիտությունն, հեղինակի հրատարակած աշխատություններում հետազոտման արդյունքների ընդգրկման լիարժեքությունը:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրհանգումները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Հեղինակը, որպես երիտասարդ հետազոտող հանդես է բերել մասնագտական ու վերլուծական անհրաժեշտ գիտելիքների բավարար մակարդակ: Անհրաժեշտ է ընգծել, որ **վերոնշյալ դիտողությունները** չեն կարող էական ազդել ատենախոսության արդյունքների գնահատականի վրա, այլ ակնկալվում է, որ դրանք հաշվի կառնվեն հեղինակի կողմից իր հետագա հետազոտություններում:

Ա.Մ. Կյուրեղյանի «Գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա

հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

Եվրոպական Համալսարանի
Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի

տ.գ.դ., պրոֆեսոր՝ **Գ.Ա. Վահանյան**

18.07.2020

Եվրոպական Համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Ա. Վահանյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

Եվրոպական Համալսարանի գիտական քարտուղար,
աշխ.գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Գ.Ս. Մանասյան**